ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

# ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

**23 -17**

« 18» ապրիլի 2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Վահագնի համայնքի ավագանու 10.04.2017թ. թիվ 13 , թիվ 14 և թիվ 15 որոշումներ:

Առդիր 5 թերթ:

Վահագնի համյնքի ղեկավար Պ.Քոչինյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Վահագնի համայնք, գ. Վահագնի, հեռ.0322- 6-95-37
էլ. փոստ՝ vahagni.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» ապրիլի 2017 թ. N 13

## ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով Վահագնի համայնքի ավագանին որոշում է .

Հաստատել Վահագնի համայնքի ավագանու 2017թ.-ի ապրիլի 10-ի նիստի օրակարգը:

Օրակարգ
Վահագնի համայնքի ավագանու 2017թ.-ի ապրիլի 10-ի նիստի

1. Վահագնի համայնքի ղեկավարի կողմից 2017թ.-ի բյուջեի I եռամսյակի կատարման հաշվետվությունը ավագանուն ներկայացնելու մասին:
2. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մայիլյան Պետրոս | | | |
| Մքոյան Էդիկ | | | |
| Քոչինյան Գարեգին | | | |
| Օհանյան Լևոն | | | |

Համայնքի ղեկավար՝ Պ.Քոչինյան

գ. Վահագնի
10.04.2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
«ՎԱՀԱԳՆԻԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ»
ՎԱՀԱԳՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 14

«10» ապրիլի 2017թ.

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 2017Թ. ԲՅՈՒՋԵԻ I ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ , 92-րդ հոդվածներով և հիմք ընդունելով ՀՀ բյուջետային համակարգի մասին օրենքի 35-րդ հոդվածով 1-ին մասով.

Համայնքի ավագանին **որոշեց**՝

Ընդունել ի գիտություն ՀՀ Լոռու մարզի Վահագնի համայնքի ղեկավարի 2017թ.-ի բյուջեի I եռամսյանկի ֆրնանսատնտեսական գործունեության հաշվետվության վերաբերյալ ներկայացված հաղորդումները:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մայիլյան Պետրոս | | | |
| Մքոյան Էդիկ | | | |
| Քոչինյան Գարեգին | | | |
| Օհանյան Լևոն | | | |

Վահագնի համայնքի ղեկավար ____________ Պ. Քոչինյան

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Վահագնի համայնքի ավագանու
2017 թվականի ապրիլի 10-ի N 14 որոշման

եկամուտների գծով`

| | |
|---|---|
| պլան | 5635,0 հազ. դրամ |
| փաստացի | 5655,1 հազ. դրամ |
| կատարման % | 100,35 % |

ծախսերի գծով

| | |
|---|---|
| պլան | 5395,0 հազ. դրամ |
| փաստացի | 3722,8 հազ. դրամ |
| կատարման % | 69,0 % |

Վահագնի համայնքի ղեկավար ________________ Պ. Քոչինյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Վահագնի համայնք, հասցե գ Վահագնի ,
հեռ.0322 6-95-37 էլ. փոստ՝ vahagni.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10 » ապրիլի 2017 թվական, 15 -Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասին, համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 20 -ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնի համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 9-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Վահագնի համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Յամայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մայիլյան Պետրոս | | | |
| Մքոյան Էդիկ | | | |
| Քոչինյան Գարեգին | | | |
| Օհանյան Լևոն | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ Պ. ՔՈՉԻՆՅԱՆ

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Վահագնի համայնքի ավագանու
2017 թվականի ապրիլի 10-ի N 15-Ա որոշման

## ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Աշոտ Փարեմուզյան երեսուն հազար դրամ, հարազատի հողարկավորության ծախսերի մասնակի հատուցման գումար, երեխայի ծննդյան գումար.
2. Շուշան Սարգսյան երեսուն հազար դրամ, երեխայի ծննդյան գումար:
3. Սուսաննա [illegible] հիսուն հազար դրամ հազար դրամ, սոց. օգնություն
4. Մեյրան Ղազարյան հիսուն հազար դրամ հազար դրամ, սոց. օգնություն:

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ____________ Ն.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(ստորագրություն)